ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2014**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2- րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ականավոր բժիշկ-գիտնական, պետական և հասարակական գործիչ, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մոսկովյան փողոց հ.31 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ականավոր բժիշկ-գիտնական, պետական և հասարակական գործիչ, ՀՀ առողջապահության նախկին նախարար, ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանը ծնվել է 1931թ. հունվարի 31-ին Աշտարակ քաղաքում:

Աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրել է բազմաթիվ պատասխանատու պաշտոններ՝ Արթիկի շրջանի բուժմիավորման գլխավոր բժիշկ, Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր, դեղաբանության ամբիոնի վարիչ, Գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ, առողջապահության նախարար:

1992թ. նրա ջանքերով ստեղծվել է առողջապահության նախարարությանն առընթեր Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալությունը:

1996-1998թթ. եղել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության Հիմնական դեղերի ծրագրի ղեկավար-կոմիտեի անդամ: Շուրջ 15 տարի Էմիլ Գաբրիելյանը ղեկավարել է առողջապահության նախարարությունը, և այդ տարիներին բացվել են բազմաթիվ հիվանդանոցային համալիրներ, կենտրոններ, կլինիկական ինստիտուտներ և լաբորատորիաներ, որոնցից ախտորոշիչ կենտրոնն առաջինն էր ԽՍՀՄ-ում:

Էմիլ Գաբրիելյանի անմիջական նախաձեռնությամբ 1988թ. երկրաշարժին հաջորդած ամիսներին Երևանում հիմնադրվել է «Սթրես» կենտրոնը: Նա նաև ակտիվ մասնակցություն է ցուցաբերել «Արմենիկում» ծրագրին:

Էմիլ Գաբրիելյանը հեղինակ է 420-ից ավելի գիտական հրատարակությունների, այդ թվում՝ 17 գրքի (մենագրություններ և դասագրքեր), ունի 10 հեղինակային վկայագիր: Նա արժանացել է մի շարք մրցանակների, կոչումների և պարգևների, այդ թվում՝ Ասպետների համաշխարհային կոնֆեդերացիայի «Մարդասիրության ասպետ» ազնվական տիտղոսի, ԽՍՀՄ Կարմիր խաչի «Պիրոգովի անվան» մեդալի, «Սեչենովի անվան», «Կրակովի անվան» մեդալների: Գիտական բարձր նվաճումների համար արժանացել է «Ոսկե սկավառակի» (ԱՄՆ) և «Պլատինե սկավառակի» (Մեծ Բրիտանիա), Տոկիոյի Կիտազատո համալսարանի, «Չիժևսկու անվան» ոսկե մեդալների, ԽՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի մեդալների, Միջազգային դեսպանի շքանշանի, UNESCO-ի «Կալինգա» մրցանակին: Գիտության բնագավառում մատուցած ծառայությունների համար Էմիլ Գաբրիելյանն ստացել է «Վ. Վերնադսկու անվան ոսկե աստղ» բարձրագույն շքանշան: Հայաստանի Հանրապետության նախագահը 2000թ. Էմիլ Գաբրիելյանին շնորհել է Մխիթար Հերացու մեդալ, իսկ 2008թ.՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Սուրբ Մաշտոց-Սուրբ Սահակ» շքանշան:

Անվանի գիտնական Էմիլ Գաբրիելյանը մահացել է 2010թ.:

Էմիլ Գաբրիելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Մոսկովյան փողոց հ.31 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել ՀՀ առողջապահության նախարար Ա. Մուրադյանի և «Հայաստանի դեղ արտադրողների և ներմուծողների միության» գործադիր տնօրեն Ս. Զաքարյանի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էմիլ Գաբրիելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էմիլ Գաբրիելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ